

Тифлисъ. Редакція „Мшакъ“

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

Այդ հարցը արձանագատարեալ է, որ դժուար է միանգամայն բացատրել. մենք կը հետազոտենք նորա զլիաւոր դիւրը միայն: Արդարեւ, ամէն մի անցալոր Հինարկուիթնի ժողովուրդներէ կեանքի մէջ ունի իր օրդւանները, որ նրանց զգալ է ապիսկրանց թերութիւնները և նախապատրաստուած է մի նոր ապարկել համար, և զրանց է յառաջ գաւաթի դիտակցութիւնը, որ կուլում է ի նրա քաղցի մէջ իւր հոգի:

ցի թղթակցները եւս որ իրա թանին թիւով չի ա-
սիւք առածին համաձայն նկարագրում են իրանց
գիւղը միշտ լաւ գոյնեղուն և եղած պատկերներն
ներքի վրա ուշադրութիւն չեն դարձնում: Բայց եւս,
որպէս օտար ճանապարհորդ, ոչ ղընց կախում չու-
նեմ և ոչ էլ ակնկալութիւն, հետեւաբար չեմ
կարող լռել և չասել թէ ներկայումս տարաբաղա-
բար անիծեալ անտարբերութեան սերմը Վարա-
շիսի ագնիւ հասարակութեան մէջ էլ հիւր լինելու
ցանկութիւն ունի: Եթէ ասեմք անտարբերութիւն
է մտել այդ հասարակութեան մէջ, դարձեալ չենք
մեղանչի: Հասարակութեան գործող անդամները
փոխվել են և հետեւաբար առաջադիմութեան գոր-
ծի վրա այն սուրբ հոգով չեն նայում, ինչպէս
նայում էին երկու տարի սրանից առաջ նրանց նա-
խորդները: Անտարբերութիւնը չէ պատճառը,
որ ամբողջ երեք տարեկան ընթացքում բոլոր հա-
սարակութիւնը չէ կարողանում մի ուսումնարան
կատարելագործել, մինչդեռ Վարաշիսի վերջին
աղքատը իր համար երեք ամսում ամբարն գեղե-
ցիկ տներ է շինել, որ դպրոցից կրկնապատիկ
ծախս է գնացել և ճաշակով չինվել: Անցեալ տա-
րի յուլիսի 15-ին ինչ դրութեան որ տեսել էի նո-
րակառոյց դպրոցը, այսօր էլ մի և նոյն անբաղդ
դրութեան մէջ ողորմ է իր ժողովրդի անտար-
բերութեան վրա, որոնք այսօրեայ գործը վաղը
գցելով, բանը այսքան յետադիմ են: Իմ կարծի-
քով այսքան վերին աստիճանի թուրքութիւն լուսա-
ւորութեան գործում, երբեք չէ կարող պատիւ
բերել Վարաշիսի հասարակութեան, պէտք է աշ-
խատել դրո՞ք առաջ մղել: Եւ յիշատի, եթէ այս
տարի էլ դպրոցը կկատար մնայ և աշակերտները չը
տեղափոխվեն, դա կատարեալ անպատեւելի է
այդպիսի մի բանասիրտ հասարակութեան: Ձայա-
օղբեցիք թէ և շատ ուշ արթնացան իրանց խորը
թմրութենից, բայց այսօր նրանց երկսեռ դպրոցները
շատ բան են խոտաւորում մեր տառապեալ աղքին,
մտածեցէք թէ դուք նրանցից որքան առաջ էք
սկսել: Մտէք մի անգամ ձեր հին դպրոցը և տե-
սէք թէ ողորմալի վարձարկանները տեղի ներդրութեան
պատճառով որքան ներդրութիւն են քաշում և
որքան աննշանի պակասութիւնների ակամայից հա-
մբերում: Մանաւանդ որքան ծնողներ արտոնում են
թէ ուսումնարանի համար մեզանից փող են հա-
ւաքում, բայց մեր գաւաակները ներս չեն առնում,
թէ տեղ չը կայք: և կատարեալ իրաւունք ունեն
տրանշելու: Աւելորդ է մեծ համարում առանձնա-
պէս մի քանի խօսք ասել այս գիւղի քեօվին:—
«Սարիբէք քեօվալ, ես պարզ տեսնում եմ, որ
ձեզանից շատ բան է կախված, ամբողջ հասարա-
պարհը որ այսպիսի անպատեւելի անդամներով չի
կարող առաջ գնալ»:

բողջ մարդկութեան մէջ մի ժողովուրդ, որ ինքն
իրան ճանաչէր,—նրան ճանաչում են և քննում են
նոյն ժողովուրդի առաջաւոր մարդիկը, զարգացած
մասը, որպէս բժիշկը հիւանդներին: Եւ այս վեր-
ջինները հաղորդում են ժողովրդին նրա թերու-
թիւնները, նրա պէտքերը, և մի և նոյն ժամանակ
հնարները նոյն պէտքերին բաւականութիւն տալու:
Դրանք կոչվում են զանազան անուններով՝ ժողո-
վրդական գործիչներ, առաջնորդող մարդիկ,—զը-
րաւոր և բերանացի խօսքը նրանց գլխաւոր գէշքն
է,—նրանք ներկայացնում են ժողովրդի մտաւոր զո-
րութիւնը, նրա ինքն և իր ցիւր և նիւս:

Բայց մենք տեսանք մեր յօդուածի սկզբում
Թիւրքիայի հայի թշուառ լինելիցնային, նա կա-
րող է արդե՞ք առաջնորդող լինել, աղղել, գրդել
և բարձրացնել ամբողջ իր ընկած դրութենից,
քանի որ ինքը լինողիցնային ուղղվելու կարօտ է:

Պէտք է ի նկատի ունենալ և տեղի դրութիւնը:
Կ. Պոլսը, որպէս պաշտօնական կայսրան, հա-
կանալի է, այնտեղ է Բ. Դուռը, այնտեղ հայոց
պատրիարքը միշտ կարող է յարաբերութիւն ունե-
նալ վեցիւրեքի և երօպական պետութիւնների
ներկայացուցիչների հետ: Բայց Կ. Պոլսը, որպէս
ներգործող կենտրոն Հայաստանի վերաբերու-
թեամբ, անյարմար է: Կ. Պոլսը, թէ և կրում է
իր մէջ Տաճկաստանի հայոց առաջաւոր մարդիկը,
բայց իր առանձնացած դիրքով, հազիւ թէ կարող
էր աղղել հեռուոր Հայաստանի վրա: Կ. Պոլսի
և տաճկական Հայաստանի մէջ ծովեր կան, Անատո-
լիայի ցամաքը կայ, այլ եւ չենք յիշում ճանապարհ-
ների վատ հաղորդակցութիւնը: Այստեղից հասկա-
նալի է աղեղնութեան թուրութիւնը, որ պոլսեցիք
կարողանում են անել թուն հայաստանցոց վրա:
Ուրեմն չէ կարելի ամեն ինչ յուսալ պոլսեցիներից
կամ ամեն ինչ նրանցից միայն սպասել:

Տաճկական Հայաստանի հայերին, աւելի քան
պոլսեցիքը, կարող ենք օգնել մենք՝ Ռուսաստանի
հայերս, որովհետեւ նրանց հետ մօտ դրացութեան
յարաբերութիւն ունենք: Թողեալ այդ, Ռուսաստա-
նի հայը համեմատաբար աւելի բարձր է, քան թէ
պոլսեցին, թէ իր մտաւոր և թէ նիւթական կա-
րողութեամբ: Ինչու մենք բոլոր հոգւր պոլսեցի-

կութիւնը ձեր ձեռքը տալիս է, ում, որ կողմն
ուղենաք, շուտ կը տաք. դուք դէպի ուսումնարա-
նը անտարբեր միջ մնալ, ստիպեցէք հասարակու-
թեանը, որ գործը առաջ գնայ, դուք սրտով գոր-
ծէք և ձեզ ընդդիմացողներին ներկայացրէք ձեզա-
նից մեծին—գիւղի պրիստաւին, որ առանց տա-
րակուսելու յոյս ունեմ որ ուսումնարանական
գործում մեծապատիւ խօշանդեանցը, ինչպէս
մինչև այսօր օգնել է, այսուհետեւ էլ կօգնէ: Մի
խօսքով չար լեզուները թէ և Սարիբէք քեօվալին
բամբաստում են թէ դէպի ուսումնարանը նայելու
ժամանակ չունի, բայց բարի լեզուներն էլ հաստա-
տում էին, որ Սարիբէք քեօվալին յուլիսի 20-ին
պէտք է հասարակական ժողով կազմէ և դպրոցի
չնտրութիւնը չարմատիկէ: Աստուած տալ ուղիղ լի-
նի:

Այսօր Վարաշիսում այն գետնափոր զիւղական
խրճիթներից երեք չորսը հազիւ կարելի է ճարել,
բոլորն էլ հին տները քանդել են և քար ու կրով
շինում են (մի քանիսն էլ երկարակամի գեղեցիկ
պատշգամներով) ամբարն գեղեցիկ ու ճաշակով
տներ, որ մարդ հիանում է: Բայց ափսոս, որ ոչ
որ ուշադրութիւն չէ դարձնում, որ շինութիւննե-
րը երկու կողմից մի քով վրա և մի ուղղութեամբ
դրվել, այլ ամեն մարդ որտեղ ուզում է, այն-
տեղ էլ շինութեան պատը դնում է և այդպէս
այդ գեղեցիկ շինութիւնները, խառն ի խառն
դրվելով, կորցնում են իրանց նշանակութիւնը:

Այս գիւղի իրական սեռը ձեռագործութեան
մէջ շատ առաջ է. համարեա ամեն տուն գիտեն
գործել հիւանայի գորգեր, կապերդներ և այլ սրանց
նման բաներ: Այս գիւղում անգործ կին չես կա-
րող գտնել, ամեն րօպէ նրանք աշխատանքի մէջ
են. կարելի, ձեռն, գործել, այգիներ և բանջարա-
նոցներ խնամել,.... բոլոր կանանց գործն է. ծե-
րունի պառուսները անգամ ճախարակները դրած
մանում են անդադար: Ինչ պատահեց այդ գիւ-
ղում մի 60 տարեկան պառուս կին, որ ակ-
նոցները դրած քարէ կահի վրա ճակատանոցներ
էր ասեղնագործում և ամբարն գեղեցիկ ու նորը
էր դուրս բերում, որ ձեռու քաղաքներից եկած
ներքից օճալով չէր տարբերվում:

Այս տարի զարաշխեցիք շատ անբաւական էին
իրանց անտառապետից, նրանք պատմեցին ինչ
անտառապետի մասին շատ բաներ. եւ մտադիր
էի նրանց պատմածները գրել լրագրում, բայց ան-
տառապետի տան խաղ և յինը գզուչացրեց
ինչ հետեւեալ խորհրդաւորութեամբ պ. եւ
յսլ եմ, որ դու մեր անտառապետի վրա բան
պէտք է գրես, միայն ես բարեկամաբար խորհուրդ

ներքի վրա երբ ձգում. մենք նրանց հետ պէտք է
բաժանենք բուսութեան լծի տակ ճնշված մեր եղ-
բայների ցանկը:

Տաճկաստանի հայերի վերականգնումը միշտ
կարծիքական պէտք է համարել, երբ յոյս կը դրվի
միմիայն Կ. Պոլսի վրա: Պէտք է ամեն տեղից, ուր
որ կան հայեր, օգնութեան ձեռք մեկնեն նրանց,
և այդ պարտաւորութիւնը առաւելապէս հասնում է
մեզ՝ ուսանողներին: Մեր բարեկալութ կառա-
վարութիւնը մեզ չէ արգելում օգնել նրանց. նա
կը ցանկանայ, որ մենք պատրաստ էինք Փոքր-Ա-
սիայում մի ժողովուրդ, որպէս վաճառ անդրակա-
ն աղեղնութեան դէմ. նա կը ցանկանայ, որ մի քը-
րխտոնեայ ժողովուրդ ազատված լինի Թիւրքիայի
բուսութիւնից, որոնց համար թափեց իր գլխուոր-
ների այնքան շատ արկներ:

Ինչ կարող ենք անել, գուցէ կը հարցնէ ըն-
թերցողը.—Շատ բան, միայն թէ մտածէինք օգ-
նել:

Բայց նախ քան օգնելը, պէտք է գիտենալ, թէ
ինչ բանի կարօտ են նրանք. իսկ այդ գիտենալու
համար պէտք է նրանց հետ որ և իցէ կապ և յա-
րաբերութիւն ունենալ: Բաւական չէ այն, որ մենք
նրանց հետ դրացիներ ենք, բայց մեր դրացու-
թիւնը մինչև այսօր եղել է այնպէս, որ առիթ
չենք ունեցել լաւ ճանաչել միմեանց: Եւ մեր յօ-
դուածի սկզբում նոյնպէս նկատեցինք, որ մեր և
տաճկաստանցոց մէջ չը կայ և չի եղել որ և իցէ
միացնող կապ:

Մեր մէջ կայ մի կապ միայն, այն է ազգակցա-
կան, որ նրանք և մենք մի և նոյն ցեղին ենք
պատկանում, մի և նոյն լեզուով ենք խօսում, և
մեր երակներին մէջ մի և նոյն արկն է վա-
զում.—այսքանը միայն: Մի ուրիշ կապ էլ ունենք,
այն է կրօնական, որ մենք և նրանք մի և նոյն
եկեղեցուն ենք պատկանում: Իսկ այդ վերջին
կապը հալվա թէ կարելի է ամբողջական համարել
զանազան հերձուածների պատճառով.—մեր կա-
թոլիկ բողոքական և մանստական եղբայրների
մեզանից բաժանվելով,—այլև, բուն լուսաւորչա-
կանների վերաբերութեամբ նոյնպէս թող է նա,
որովհետեւ, որ մեր կողմ, մեր եկեղեցական կառա-

կը տամ, որ ուրիշ չվանով հորը չը մտնես և գը-
լուիդ զաւարդալի մէջ չը գցես, անտառապետի
հետ գործ չունենաս: զգուշ կաց, ամեն մարդ մի
ստաց չը տանիս....» Եւ էլ լսելով միայն այս
խորհրդատուութեան և թողնելով առանց ուշադրու-
թեան ամբողջ հասարակութեան անբաւականու-
թիւնը, կնքում եմ նամակս:

Ճանապարհորդ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սապօթսկ, 12 յուլիսի

Մօսկվայում հրատարակողը «Русскія Вѣдомос-
ти» լրագրի № № 151—162 համարներում օրե-
րուն տպվեց իմ թարգմանութեամբ պ. Իաֆֆիի
գեղեցիկ և հետաքրքիր «Հարեմ» վէպը «Въ пер-
сидскомъ гаремѣ» վերնագրով:

Վերնագիրը փոխել ինչ ստիպում էր այն հան-
գամները, որ «гаремъ» բառը ուսուց լեզուում
ստացել է պարսկական «հարէմ» նշանակու-
թիւն, իսկ պ. հեղինակը, եթէ չեմ սխալվում, «հա-
րէմ» բառը գործ է ածում վէպի մէջ բառի բուն
նշանակութեամբ, այսինքն—հարէմիանայում փա-
ված կին: Այս զանազանութիւնը աչքի առաջ
առնելով, եւ լաւ համարեցի վերնագիրը փոքր ինչ
փոխել, որով, ի հարկէ, ոչ մի անհամապատաս-
խանութիւն չի առաջ գալ վերնագրի և վէպի բո-
ւանդակութեան մէջ: Թարգմանութեան մէջ իմ
գլխաւոր աշխատանքս է եղել—պահպանել ընա-
գրի գեղեցիկութիւնները, թարգմանել որքան կա-
րելի է ազատ բռնակներ լեզու.—որ և կարծեմ
ինչ յաջողել է: Ինչ որ վերաբերում է վէպի մէջ
պատահող ոտանաւորներին, եւ թարգմանել եմ
նրանց նոյնպէս ոտանաւորներով, բայց առանց
ճշգրտութեամբ հետեւելու ընադրին, ըստ որում ան-
կարելի է թարգմանել նոյնութեամբ և այնպէս, որ
ուսանողները գոյս զայ ուղիղ չափ և ոտ (раз-
мѣръ и ризма): Թարգմանութեան մէջ եւս հար-
կաւոր եմ համարել անել մի քանի ծանօթութիւն-
ներ, աւելորդ չեմ համարել նոյնպէս ցոյց տալ մի
տեղ պատուելի հեղինակի մի աննշան սխալ—այն
է, որ առաջին գլխից երեւում է, որ հարէմիանայի
տղա սպասաւորները մինչև 10 տարեկան էին, իսկ
մի փոքր յետոյ երեւան է դալիս 17 տարեկան պա-
տանի Սալիդը, Զէյնար—խանութի ծառան, որ սի-
րում է Մարշանին և հետեւապէս երկուդալի կա-
րող էր համարվել հարէմիանայում:

Վարութիւնները երկու հակառակ պետութիւնների
մէջ—Թիւրքիայում և Ռուսաստանում—կարծես,
մինը միմեան հակառակ աթուղներ են ներկայաց-
նում, և այդ աւելի նկատելի եղաւ վերջին քաղա-
քական հանգամանքներում, երբ Ս. Էլմիաճին
հարանը իրան խուս անտարբերութեան մէջ պա-
հեց, ամենին չը մասնակցելով Կ. Պոլսի պատ-
րիարքարանի ձգտումներին: Պատմութիւնը, ի հա-
րկէ, կը զատապարտէ այդ մեծ անուշադրութիւնը,
իսկ ժամանակակից բարեմիտ մարդը չէ կարող ա-
ռանց խորին վրդովմունքի նայել դրա վրա:

Յակոբով պէտք է խոստովանվել, որ չը նայելով
մեր ամենին բոլոր ցանկութեանը, վերջին ժամա-
նակներում, լուսաւորչական ս. աթուղի Վեհափա-
ռի ընտրութիւնը Թիւրքիայի եկեղեցականներից
չարդարացրուց այն յոյսը, որ սպասվում էր, այ-
նչին, որ Տաճկաստանից ընտրված ընդհանուր
հայոց Վեհ. Կաթողիկոսը կամրացներ հայրապե-
տական աթուղի կապերը Կ. Պոլսի պատրիարքա-
րանի հետ, որպէս աւելի բազմաթիւ հայ ազգա-
բնակչութեան եկեղեցու ներկայացուցիչ: Այս խօս-
քերը մեզ ասել են տալիս մի քանի տխուր փա-
տեր, որոնց յիշելու աւելորդ ենք համարում: Եւ
որ աւելի մեծապաւրս է, այն է, որ նոյն իսկ ս.
Էլմիաճին մէջ յառաջ եկաւ մի տեսակ խորթու-
թիւն,—վեհաբանը առանձնացաւ ամբողջ միաբա-
նութիւնից: Ով որ փոքր ի շատէ ծանօթ է ս.
Էլմիաճին այժմեան դրութեանը, կը համաձայնի
մեզ հետ: Այդ, ի հարկէ, պէտք է համարել մի
կամայական զեղծում, որ առաջ է եկել աւելի
անձնաւորութիւններից, և որը ապագայում կարող
է ուղղվել, երբ նախ անձնաւորութիւնները տեղի
կը տան ուրիշներին: Իսկ մեր եկեղեցական բարձր
կառավարութեան հիմնական գաղափարը դարձեալ
մնայ այն, ինչ որ եղել է միշտ, այսինքն, թէ
ս. Էլմիաճինը, որպէս գլուխ, կունենայ սիրտ և
անմիջական կապ իր բոլոր մասների հետ.—ընդ-
հանուր հայոց հոգ. ներկայացուցիչների հետ,—
որտեղ և ինչ պետութեան մէջ լինէին նը-
րանք:

Եւ հարկաւոր չեմ համարում այժմ մեր կեղծոտ
լուսաբեր դուրս թափել և ուրիշների աչքի առջև

Եւ ինչ քաղաւոր եմ համարում, որ իմ ան-
նշան, չնայն աշխատութեամբ ես մի թեթիւ միջոց
տուի ուսու հասարակութեանը ծանօթանալու և մի
հասկացողութիւն կազմելու հայ գրականութեան
վիպասանական ճիւղի հետ:

Ս. Դադեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ԱՖԱՍ-ԹՈՒՄԱՆԻՑ. «Շըր-
լականների անհանգիստ բնաւորութեան լուրեր են
սովոր այստեղ: Այսօր քնաց դէպի Աբաս-Թու-
ման կողմերի մի հարիւրեակի Ներքին Աշարան
ամբողջապէս զաղթել է. յետ մնացած կարիճ-
ները խումբեր կազմած սպանում են թափվել
Աբաս-Թումանի վրա»:

Մեր ստացած տեղեկութիւնների համեմատ գա-
ւառական գրեթէ բոլոր քաղաքներում և բաւա-
կան շատ գիւղերում կատարված է հանդ. Ս. Նա-
զարեանի հոգեհանդիստը: Մի քանի տեղերում,
որտեղ հասարակութիւնը տեղական հոգեւոր իշխա-
նութիւնից հրաման ժողովով յարգել է հանգու-
ցալի յիշատակը: Վատ չէր լինի եթէ վաղարշա-
պատեցիք էլ փորձէին հանգուցեալի յիշատակը
յարգել:

ԹԻՖԼԻՍԻ Զիգրաչէն եկեղեցուց մի ննջեցեալ
դուրս տանելուց յետոյ մոմերը վառած են միա-
ցել և հրդեհ է գոյացել: Զրդեհից այրվել են եկե-
ղեցու գրեթէ բոլոր գարգիւրը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Քաղաքական վերջին յուզմունքների ժամա-
նակ մի լուր տարածվեց, որ իբր ձալկ մինիս-
տրին կամենում են հրաժարեցնել պաշտօնից:
Այս անտիկալ լուրը անդալիստականների
սրտում յաջողութեան նորահոր յոյսեր է ծնեց-

լումաւ. դեռ եւս պէտք է լռել... խօսելու ժամա-
նակ շատ կայ...

Խօսելով ազգային միութեան վրա, չէ կարելի
չը յիշել մեր այն եղբայրներին, որ կրօնական հեր-
ձուածներով բաժանվել են մեզանից, մեր խօսքը
հայ-բողոքականների գործը անգլիացիների ձեռ-
քում, որ չունի ոչինչ կապ քրիստոնէութեան և
կրօնի հետ,—երբ տեսնում ենք, որ պապականու-
թիւնը մոլեռանդ կղերի ձեռքում դառնում է
գործը ու լ ա տ ր ա մ օ ն տ ա ն ի ղ մ ի, որ մի ամ-
բողջ ժողովուրդ շինում է պապի և նրա արքա-
նականի ստորակ,—այդպիսի դէպքերում չէ կա-
րելի անտարբեր մնալ: Կաթոլիկութիւնը, որպէս
սատուածաբանական ս ի ո լ ա ս տ ի կ ա, միշտ եղել
է հակառակ կրթութեան և ժողովրդի ազատ ոգու
զարգացման: Իսկ բողոքականութիւնը, որպէս նոր
աղանդ, որպէս նոր խմոր, աւելի թունդ է իր ֆանա-
տիզմով: Ով որ տեսել է բողոքականին Եւրօպայում,
գուցէ կը ծիծաղի մեր դատողութեան վրա, բայց
Ասիայում նոյնը չէ բողոքականը, այստեղ նա բա-
ժանվելով իր մայրենի եկեղեցուց, դառնում է բո-
լորովին ուրիշ մարդ. նրա բոլոր կապերը կտրվում
են իր ազգի հետ, և նայում է իր ազգայինների վրա
այնպէս, որպէս մի ժամանակ հրեաները նայում
էին սամարացիների հետ: Կաթոլիկները մա-
սին աւելորդ է խօսել անգամ, նրանք աւելի վատ
են: Մէջք իրան ին գ լ ի ղ է կոչում, միւսը Փը-
ր ա ն դ: Եթէ սրանք այսպէս են, լուսաւորչական-
ները նոյնպէս յետ չեն մնում իրանց աննոր-
դատութեամբ դէպի իրանց անվտանգ եղբայր-
ները, և աւելի նրանց առիթ են տալիս հեռանալու:

(Կը չարուհակի)

նում, նրանք հետզհետեւ աւելի ու աւելի են խրախուսւում, և ինչպէս չը պէտք է խրախուսվին. ամենատեղի միջնորդը պաշտօնից զրկւում է, իշխան Բիւմարի կտրել է իր բոլոր յարաբերութիւնները ազգային ազատամիտ կուսակցութեան հետ: Կրօնականները հաղորդում են, որ յանկարծ բարձրագոյն հրաման ստացվեցաւ, որ Պօզնիի նախկին արքեպիսկոպոս կարդինալ Ալեքսանդր Գեորգիան զաւաթաւանակաւ հետապնդուի իւր իրաւունքները զաւաթաւանակելու: Այս դեռ բաւական չէ, Բրէսլաւի իշխան-եպիսկոպոսը, որ արքայ էր ուղարկված ատորիական Սլէզիա, այս օրերս աւստրիական կայսրից ստացաւ Ալեքսանդրեան ուխտի մեծ-լազ կոչված պատուանշանը, և զերմանական կառավարութիւնն էլ իր կողմից ոչինչ արգելք չը հանեց: Գերմանական լրագիրները այս բոլորից եղբակցեցում են, որ շուտով այս երկու առաջնորդները թողաւութիւն կը ստանան կատարել իրանց թեմական պաշտօնը:

Սահմանադրական փոփոխութիւնների ծրարը, որը այս օրերս իշխան Բիւմարի ներկայացրեց դաշնակցական ժողովին, ահագին և մի և նոյն ժամանակ բոլորովին արգարացի յուզմունք գրեց ամբողջ Գերմանիայի մէջ: Հասարակական կարծիքը այժմ սաստիկ վերելքով է, և այսպէս չէր էլ կարող լինել: Հասարակական կարծիքը շատ պարզ կերպով է նշմարում թէ ինչպէս արքունի ատեմադրվելը ձգտում է զէպի կատարելով յետագիւծութիւն: Արդէն զեռ երկէ նա բացառաւ կարայ խոստովանում էր, որ մեծ վատահուծութիւն չունի պարլամենտի վրա: Եւ ոչ ոք չէ կասկածում, որ իշխան Բիւմարը այն մարդկերանցից է, որոնք ասածը կատարում են: Գերմանիայի ազատամիտ մամուլը բոլոր իր ոյժով աշխատում է հակառակել միջնորդի ներկայացրած օրէնքի նոր ծրագրին, որը այնպիսի յանդիմանութեամբ ձգտում է ոչնչացնել պարլամենտական ազդեցութիւնը:

«Köln. Zeitung» լրագիրը ասում է, որ մի բացարձակ ինքնակալութեան իշխանութիւնը բոլոր անգամ աւելի զերազատելի է, քան թէ մի միջնորդի անխաղաղութիւնը, որ առաջ է տանում իր գործերը անդադար ծածկելով սահմանադրական դիմակի տակ, և որչափ իրաւացի էր ռեբլիմ «National Zeitung» լրագրի երկիւղը, որով նա սահմանադրութեան համար անդադար երաշխաւորութիւն էր պահանջում:

Այժմ պարզ երևում է, որ մաքսային և հարկերի վերանորոգութիւնները իշխանի համար ոչ այլ ինչ էին, բայց եթէ մի նախապատրաստութիւն, իր գլխաւոր նպատակին հասնելու համար: Այժմ որ այդ նախապատրաստութիւնները արդէն կազմ ու պատրաստ են, ուրեմն շատ ժամանակ չի անցնի, երբ մէկ էլ տեսար գերմանական հռչակաւոր սահմանադրութիւնը, իր պատուաւոր պարլամենտի հետ միասին անդունդը կը գլորվի: Անշուշտ մեր խօսքերը փոքր ինչ խիստ են սահմանադրութեան ապագայի գուշակութեան վերաբերութեամբ, նա, ի հարկէ, անդունդը չի գլորվի, բայց նրա մէջ այնպիսի հիմնաւոր և ամօթալի վերանորոգութիւններ կը լինեն, որ աւելի լաւ է անդունդը գլորվի, քան թէ այդպիսի մի խայտառակ վերանորոգութեան երկարակի: Գերմանական լրագիրները այս բանի մէջ միայն իշխան Բիւմարին չեն մեղադրում, նրանք մեղադրում են նոյնպէս և ազգային ազատամիտ կուսակցութեանը, որը ամեն բանի մէջ աչքը խփեց և հետզհետեւ իր սանձը տուց Բիւմարի ձեռքը: Գայլին ինչու էք մեղադրում, որ գառը փակցրեց, չէ որ հովին է մեղաւոր:

Իսկապէս իշխանին չէ կարելի մեղադրել, նա հաւատարմով իր քաղաքական սկզբունքին, օգուտ է քաղում, որովհետեւ միայն կարելի է օգուտ քաղել:

Մի բանի լրագիրները բոլորովին յուսահատված ասում են, այժմ արդէն ուշ է, մի քան

նիսն էլ, ընդհակառակը բոլոր եռանդով բողբելով այդ նոր ծրագրի դէմ, հրաւիրում են հոխտման ընտրողներին անել երկուսից մէկը: «Կամ Բիւմարին համար քուէարկել և կամ նրա հակառակ: Այս վերջին լրագիրները զեռ բոլորովին չեն վհատում, և քանի որ զեռ ժողովուրդը չէ տուել իր ձայնը, նրանք զեռ յոյս ունեն յաջողութեան մասին, բայց երբ ժողովուրդը—այդ իսկական իշխանութիւնը կը տայ իր համաձայնութիւնը, այն ժամանակ դատակնիքը վճռած կը լինի: Ել այնուհետեւ նրանց ոչինչ չի մնայ անելու:

ԿԱՐԵՆՑ ՄԵՋ ՄԱՅԱՆ ԽՈՒՆՎՈՐԻՄԻՆԻ

Վազրթ լրագրին այս առաւօտեան թւոյն մէջ հետեւեալը կը կարգամբ.

«Վարինքն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ անցեալ հինգշաբթի օրը տասն և հինգ տարեկան Պարսիկ պատանի մը Հայ աղջկան մը պատիւը բռնաբարած լինելուն պատճառաւ դատ բացուելով՝ յիշեալ պատանին կառավարութեան յանձնուել է, սակայն Հայք կուր հաներ են: Երկրորդ հեռագիր մ'այս եղևութիւնը պատմելէ ետեւ կը ծանուցանէ թէ երկուշաբթի օրը հացի առևտուրի առթիւ Հայոց և Պարսկաց մէջ կուր ծագելով, Հայք զէնքով Պարսկաց վրայ յարձակեր և խել մը յանդիմանութեան գործեր ըրեր են: Երրորդ հեռագիր մ'այ կը ծանուցանէ թէ Հայք այս կուռնի միջամտող կայսերական զօրաց վրայ կրակ ընելով մէկ երկու զօրական վերաւորներ են, և կուսակալ և հրամանատար փաշաներուն միջամտութեանը վրայ, մինչև տասիձան մը խռովութիւնը հանգարտեր է, բայց Հայք դարձեալ յուզեալ վիճակի մէջ են եղեր:

«Գործին էութիւնը ինչ որ ալ լինի, ըստ որում յանցաւորը բռնուած է և կառավարութեան առջև դատը կը տեսնուի, մեր Հայ հայրենակցաց այս կերպիւ անձամբ և հաւաքաբար և զէնքով իրաւունքը տեղը բերելու ելնին և խաղաղութիւնը վրդովելը գործեր ընելը պարսաւանաց արժանի է: Մեր վատահեմը որ ամեն խելացի Հայեր ալ ցաւ պիտի զգան այս դէպքին պատճառաւ: Ցաւալիցս չը կայ որ այս գործին մէջ գրգռութիւններ (թահրիքեթ) կան: Ինչ որ ալ լինի, ամեն մարդ կը սպասէ որ աւելի կատարեալ տեղեկութիւնք հրատարակին և բուն իրողութիւնն երևան ելնէ:

Մեր Թուրք պաշտօնակիցը շատ կանապարէ երբ կրէ թէ «Պուշտա պէհլէհլայ պաղը թահրիքեթ պուշտուտը աշիքեթ տըր» Այս առաջին անգամը չէ որ Հայաստանի մէջ Հայ կանանց և աղջկանց պատիւը կը բռնաբարի: այսպիսի բռնութիւնք այնքան յաճախ գործուած են և յանցաւորը այնքան անպատիւ ցանցած են, որ երբ Կարնոյ պէս քաղաքի մը մէջ ալ այդպիսի ոճի մը կը գործուի, Հայոց յուզումն և ոճրագործին պարզ ձերբակալութեամբն անոնց գոհ չը լինելը զիւրա կը հասկցուի: Ինչ է պատճառն, որ Թուրք լրագիրը Հայաստանի մէջ գործուած անլուր բռնութեանց և չարագործութեանց վրայ Զաքարիական լուրթիւն կը պահեն, և երբ Հայոց կողմանէ ինքնապաշտպանութեան փորձ մը տեսնուի իսկոյն կրակ կը կարին Հայոց դէմ: Թողով Վազրթի յատուկ եղած չափազանցութիւնները, նոյն իսկ իւր պատմութիւնը բաւական է ապացուցանելու թէ Հայք իւր կարծածին չափ յանցաւոր չեն: Հայերը Պարսիկներու հետ կուր ըրեր են, և կարծեմք որ եթէ Պարսկաց բրձներն ալ պատմուէին, անշուշտ պիտի տեսնուէր որ Հայք օրինաւոր պաշտպանութեան սահմանը չեն անցած:

Ինչ և ինչ, քանի որ իրողութիւնն իւր բոլոր պարագայներով ծանօթ չէ, հարկ կը լինի սպասել աւելի ճիշդ և մանրամասն տեղե-

կութեանց և տեսնել թէ արդարեւ Հայք զինեալ էին, թէ ձրի ամբաստանութիւններ կը լինին անոնց վրայ, ի վարձատրութիւն վերջին պատերազմին ժամանակ անոնց մատուցած հաւատարմութեան անձուէր ծառայութեանց: Եթէ Հայք ինչպէս Վազրթի հրատարակած հեռագիրը ցուցնել կուզեն՝ ապատմական ոգի մ'ունենային, յարմար առիթներ պակաս չէին, մանաւանդ վերջին պատերազմին ժամանակ, և զարմանալի է որ Կարնոյ կառավարական պաշտօնատարը՝ փոխանակ իրենց պարտքը կատարելու և ժողովրդական աղմուկի պատճառ չը տայու, իւր իրաւունքը պաշտպանող ժողովուրդը մ'իրբե զինեալ ապստամբ կամ բաւտանեն:

Այս առթիւ հարկ կը համարվի յիշեցնել մեր Թուրք պաշտօնակցաց թէ Հայաստանի բարենորոգմանց գործին մէջ իրենք ոչ միայն ձախող, այլ և նոյն իսկ կառավարութեան շահուց միասակար ընթացքի մը կը հետեւին: Եթէ կուզեն օգտակար և միանգամայն լրագրութեան կանոնաց յարմար գործ մ'ընել, իրենց պարտքն է երկրին ակտիւն ամենայն անկողմնակալութեամբ մասնանշ ընել և ոչ թէ շիւ աչօք նայիլ մասնաւոր դէպքերու վրայ:

(Մատիա)

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԻՔԻՍՏԻՑ

Երկրում, յուլիսի 1-ին

Այս օրերս ուռաց կոնուլ պ. Կամարականը գնալու է Վան, բայց չը գիտենք ինչքան ժամանակով Վանի մէջ անգլիական փոխ-հրապարտ է նշանակվիլ պ. Կապիտան Լիւկտեն. Անուշտ լսած կը լինէք որ Երկրում տեղական հայեր, տեսնելով որ Թուրքաց տէրութիւնն նշանակված յանձնաժողովը ոչինչ հաստատ գործ չէ սկսեր, մատուցին այս օրերս յանձնաժողովի նախագահին մի ընդարձակ և մանրամասն յիշատակագիր, քառասուն և վեց յօդուածներէ բաղկացեալ, որոյ մէջ կը խօսվի այն վերանորոգութեանց մասին, որոնց մտցնելը և իրագործելը Հայաստանին մէջ ցանկալի է: Այդ յիշատակագրին մէջ կապացուցվի Հայաստանի մէջ քրիստոնեայ նահանգապետ մը նշանակելու կարեւորութիւնը: Ընդհանրապէս կըսեն, թէ յիշատակագիրը շատ զորեղական, խելացի և համարձակ կերպով կազմված է: Յանձնաժողովը ընդունելով այդ թուղթը, արդէն այսօրվայ փոստայով ուղարկած է Կ. Պոլիս նրա պատճէնը: Քիշտակալը ներկայացվեցաւ յանձնաժողովին Երբումի հայ. պատգամաւորների թէ հոգեւորականների և թէ աշխարհականների ձեռքով և այդ պատգամաւորները սիրով ընդունելութիւն գտած են յանձնաժողովի նախագահ, Իւսուֆ-փաշայի կողմէ, որ և խոստացած է պատգամաւորներուն լայն ընթացք տալ նրանց խնդրքին և նրա մէջ արտայայտած պահանջմանց:

Աղբեզեզեան եղբայրները իրենց ծանր, խոհեմ և անկեղծ վարմունքով ընդհանուր համակրութիւն, սէր և յարգանք վաստակած են տեղացի թէ քրիստոնեայ և թէ մահմետական ժողովրդին մէջ: Մահաւանդ Մարկոս-Վֆէնդին բարեբար ազգեցութիւն ունեցած է տեղիս հայ երիտասարդութեան ուղղութեան վրա:

Լսած կը լինէք այն անկարգութիւններու մասին, որոնք պատահած են այստեղ հայ և պարսիկ ազգաբնակութեան մէջ: Այդ խռովութիւնները բարեբաղդաբար ոչինչ վատ հետեւանքներ ունեցած չեն:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

ՆԱՆԻՍ, 22 յուլիսի (3 օգոստոսի): Այսօր դանազան դատարարներ և հազար բազմութեան ներկայութեամբ բացեցին Թիւրքի յիշատակարանը (ПАМЯТНИК). հանդիսին ներկայ էին միջնորդութեան անդամները, պարլամենտի զլխաւոր գործիչներ և բազմաթիւ ուսումնականներ:

ԿԻԵՎ, 22 յուլիսի: «Кіевскія Губернскія Вѣдомости» լրագրում տպված են Կիէվի զինուորական դատարանում յուլիսի 7, 10 և 14-ին կայացած դատավճիռները: Առաջին դատավճիռի հիման վրա 11 մեղադրվածները բոլորն էլ յանցաւոր են ճանաչված մեղաւորութեան ընկերութեան պատկանելու մէջ: Նրանցից մի քանիսին մեղադարտ են ճանաչում Թիւրքի զինուորական զնդի գրամարկի կողմնակալութեան նախապատրաստութիւնների մէջ, պոլիցիական վարչութեան զէնքով ընդդիմադրելու մէջ, քաղաքացաւոր զինուորին մահ սպառնալու մէջ, երկու սպանութիւնների մէջ, որոնցից մէկը կանխաձեռն գիտաւորութեամբ և սպանվածին խաբելով են կատարել, բայց այս նրանք մեղադարտ են ճանաչված և ուրիշ յանցանքների մէջ: Գօրսկի, Բիլչանսկի և Օվչինիկով մահուան պատժի են դատապարտված. իսկ մնացածները—տասնական յաշխատանքների: Մի ուրիշ գործից երեւում է, որ մի մեղադրված յանցաւոր է ճանաչված մասնակից լինելով և օգնելով յանցաւոր գործին արգելված հեղինակութիւններ տարածելով, յանցաւոր դատապարտված է տաժանակիր աշխատանքներին: Երրորդ գործից երեւում է որ Ֆէդորով, Կրասովսկի և Պրէդտչենսկի մեղադրվածները յանցաւոր են ճանաչված, ձայնովոր գործիքներ պատրաստելու մէջ, և այն բանի մէջ որ նրանք իրանց մօտ պահելիս են եղել ահագին քանակութիւն (пироксилинъ) պիրօքսիլին արգելված ընկերութեան զիտաւորութիւնների համար: Ֆէդորով և Կրասովսկի դատապարտված են մահուան պատժի, իսկ Պրէտչենսկի տաժանակիր աշխատանքներին: Գերմանացի նահանգապետի հաստատութեամբ Օվչինիկովի և Կրասովսկու մահուան պատժը փոխված է տաժանակիր աշխատանքների: Մեղադրված Սորոքանովին դատարանը թողութիւն շնորհեց: Յուլիսի 18-ի առաւօտեան 10 ժամին Բիլչանսկուն, Ֆէդորովին և Գորսկուն կախաղան բարձրացրին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ռ. 37 կ., երկրորդ 94 ռ. 25 կ., երրորդ 94 ռ. 25 կ., չորրորդ 94 ռ. 25 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 233 ռ. 5 կ., երկրորդ 223 ռ. 5 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 92 ռ. 62 կ., երկրորդ 92 ռ. 25 կ., երրորդ 92 ռ. 37 կ., ոսկի 7 ռ. 69 կ.: Տրամադրութիւնը խաղաղ է:

ԼՈՆԴՈՆ, 24 յուլիսի (7 օգոստոսի): Համայնքների ժողովը ընդունեց զուլունների դէմ մղված պատերազմի համար նշանակված 3 միլիոն ֆունտ ստերլինգ փոխառութեան առաջարկութիւնը:

ՓԱՐԻՋ, 24 յուլիսի (7 օգոստոսի): Նանսի ուղեւորվող 22 վազօններից բաղկացած արտակարգ գնացքը, որ ընդհարվել էր մի ուրիշ կառավարի, ջախջախվել է. 5 հոգի սպանված են, և 31 հոգի վիրաւորված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յուլիսի: Այսօր Դոն-դուկով—Կորսակով հաւաւ այստեղ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յուլիսի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ռ. 30 կ., երկրորդ 93 ռ. 50 կ., երրորդ 93 ռ. 75 կ., չորրորդ 93 ռ. 75 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 233 ռ. 25 կ., երկրորդ 233 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 92 ռ., 50 կ., երկրորդ 92 ռ., ոսկի 7 ռ. 65 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,50 պէնս. ուռաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 129 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 268 ֆրանկ: Տրամադրութիւնը թող է:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՐԻՎՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

